№ 188 Հոկտեմբերի 12 Չորեքշաբթի 1882 Հոկտեմբերի 12 Չորեքշաբթի № 188

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ախալքալաքից: Նամակ Ախալքալաքից: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Անգլիա: Նամակ Թիւրքիայից, Արտաքին լուրեր:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Սեպտեմբերի 30

Ախալքալաքի ամրոցը գտնվում է մի պայտաձև թերակղզու վրա, որին երկու կողմից ոռոգում են Թափառավան և Ղախ-բուլաղ գետակները:

Նախկին Ախալքալաքը դատելով աւերակներից, տարածվում է եղել յիշեալ ամրոցի և հարաւային և հիւսիսային կողմերում, բայց այդ աւերակներից՝ հիւսիսային կողմինը, աւելի պարզ են երևում, որովհետև մարդկանց համար երթևեկութեան ճանապարհ չէ դարձել:

Ծերունիների ասելով, այդ մասում հողի տակ գտնվում են ամբողջ շինութիւններ—տներ, յաճախ իրանց կահկարասիքով. դորա ապացոյց կարող են լինել այն պղնձեղէն տնային անօթները, որ, ինչպէս պատմում են գտնվել են, փորելու միջոցին:

Այժմ այդտեղ մի ընդարձակ արքունական շինութիւն է կառուցվում, դորա համար քարեր վեր են առնում աւերակներից: Անցեալ օր, այդ նպատակով մի աւերակ փորելիս, մշակները պատահեցան մի քարուկրեայ պատի. շարունակելով փորել, նոքա գտան սրբատաշ քարերից շինած մի սալայատակ և նորա տակ արդէն, մի քանի գերեզմանաքարեր, խաչքարեր, մի քարէ աշտանակ (подсвѣчникъ), որի մէջ գտնվեցան մեղրամոմի մնացորդներ,—եկեղեցու դրան վերևի մի քար և այլն: Գտնված քարերից շատերը ծածկված են հայերէն արձանագրութիւններով, դոքա վերաբերվում են XIII, XIV և XV դարերին, դորանցից ամենահինը ունի այսպիսի արձանագրութիւն «Այս է հանգիստ Ներսէս գէ (քահանային?) Թվ. չխգ. (1294):

Միւս գերեզմանաքարի վրա քանդակած են երկու մարդկանց կերպարանքներ (фигуры) որոնց վրա կայ այսպիսի արձանագրութիւն: «Այս է հանգիստ ենձ գիտես հարազատ որ ճանաչես, եղբարք.... Վ...ադին և Ներսուդին: Վերից՝ Թվ. պ. ժա (1362):

Եկեղեցու դրան վերևի քարի վրա, հազիւ կարողացանք կարդալ Թվ. Ջ. (1451):

Քարերից մի քանիսի վրա նկատվում է ծեփած աղիւսի թանձր շերտ, զորօր. մի կանգուն խաչքարի վրայ որ հաւանականապէս քահանայի գերեզմանաքար է—հազիւ կարողացանք կարդալ մի քանի հատուկտոր բառեր, այն է «ընկալ, կեցո ողորմեա.... հանգուցեալ:»

Քարէ աշտանակը մօտ 7 վերշոկ բարձրութիւն ունի և կոշտ շինք ունի (այդպիսի մի աշտանակ, ինչպէս ինձ հաղորդեցին, այժմ էլ դեռ կայ գաւառիս վրացական Փիլշատ գիւղի եկեղեցում): Դորա վրա էլ արձանագրութեան հետքեր երևում են, բայց անվերծանելի:

Բացի դորանից դեռ հողի մէջ երևում են բազմաթիւ գերեզմանաքարեր, բայց փորողները դադարեցրին փորելը և հողով ծածկեցին տեղը:

Բացի դորանից այդ փորուածքի միջից դուրս են հանել կիսայրված փայտերի կտորներ և շատ ածուխ. կարծում են որ այդտեղ մատուռ է եղել, որի մէջ թաղված են եղել մի քանի նշանաւոր անձինք: Արդեօք խաչքարերի կրով ծածկելը և այրված փայտերը արդիւնք չեն տաճկական բարբարոսութեան:

Պ. Կ. Թէմուրազեանցը, ինչպէս ասում էր, թարգմանած ունի այն շրջաբերականը, որ 1880 թւում կովկ. ուսումնար. շրջանի հոգաբարձուն ուղղել է դիրեկտորներին, առաջարկելով այն հարցերը որոնց պէտք է պատասխանէին գիւղական կեանքի ուսումնասիրել ցանկացողները, ցանկալի է որ դուք դորան տպէիք մի առանձին թերթի վրա և ուղարկէիք ձեր գաւառական թղթակիցներին, գիւղական ուսուցիչներին և բանիմաց քահանաներին բաժանելու համար: Հարկաւոր եմ համարում գիւղական կեանքը ուսումնասիրել ցանկացողներին առաջարկել կարդալ պ. Կավելինի «Крестьянскій вопросъ» յօդուածը, 1881 թւի «Вѣстникъ Европы» ամսագրի 3-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ համարներում, որի մի քանի կտորների հետ թարգմանօրէն կաշխատեմ ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին, եթէ միայն կը ներէ միջոցս:

Խ. Մառանկոզեանց

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

Հոկտեմբերի 3-ին

Ախալքալաքի գաւառում հողի պակասութիւնը գիւղական ազգաբնակութեան բազմանալուն հետ, օրըստօրէ աւելի զգալի է լինում: Այսօր գրեթէ չը կայ մի գիւղ, որ գանգատվելիս չը լինի իր վարելահողերի, խոտնոցների և արօտատեղիների պակասութեան վրա և հողային վէճերի բազմութիւնը կառավարչական և դատաստանական ատեաններում ճարտարապէս արտայայտում է այդ հանգամանքը: Որպէս զի ընթերցողը կարողանայ գաղափար կազմել մեր գաւառի գիւղացու այժմեան տխրալի դրութեան վրա, օրինակ կը բերեմ Ջամուրա հայաբնակ գիւղը; որ գտնվում է Ախալքալաքից հարաւ-արևմուտք, երեք վերստ հեռաւորութեամբ:

Այդ գիւղը հիմնարկվելով 1830 թ. ունեցել է 20 տուն բնակիչ և իր շահեցողութեան տակ մօտաւորապէս 2000 դեսեատին վարելահող, խոտնոց և արօտատեղի: Այն ժամանակ գիւղի արական շնչոց թիւը 130-ից աւելի չէ եղել, հետևապէս իւրաքանչիւր արու գիւղացի ունեցել իր շահեցողութեան տակ 15 դես. աւելի՝ 10 վարելահող, իսկ 5-ը խոտնոց, արօտատեղի և այլն: Այսպիսի առատութեան մէջ հասկանալի է, որ այդ գիւղի բնակչաց նիւթական վիճակը տարեց տարի կը ծաղկէր և արդէն 40-ական թւականներին դրամատ եղել են մօտաւորապէս 500 կով, 100 մատակ, 2000 ոչխար և 200 ձի: Բայց 50-ական թւականներից սկսած Ջամուրա գիւղի բաղդի լուսաւոր աստղը սկսել է հետզհետէ խաւարել, շրջապատող արքունի և կալուածատիրական գիւղերը և Ախալքալաքը սկսել են հետզհետէ խուզել այդ գիւղի հողերը. Խօսպիս գիւղը 230 դես. Վաչեանը և Գիւմպիւրաէն 300 դես. Ախալքալաքը և Մուրճախէթը 150 դես. և վերջապէս Ցիխիսկան 567 դես. ընդամենը 1257 դես. այնպէս որ այժմ Ջամուրայի շահեցողութեան տակ մնում է ընդամենը 743 դ., որից 500-ը հազիւ պիտանի է, իսկ մնացածը ձոր, քար, աղբիւր, կալ և գիւղատեղ է:—Այդ պիտանի համարված 500 դ. էլ, լինելով անջրդի, իւրաքանչիւր տարի մշակվում է կիսով չափ: Իսկ գիւղի բնակչաց թիւը եռապատկվել է. Ջամուրան այժմ ունի 75 տուն, 330 արական շնչով, որոնցից իւրաքանչիւրին հողաբաժին հասնում է երկու դեսիատինից պակաս, որի թւում ոչ խոտնոց կայ և ոչ կանոնաւոր արօտատեղի և որի միայն կէսն է մշակելի իւրաքանչիւր տարի: Յայտնի բան է, որ այսպիսի անբարեյաջող պայմանների մէջ Ջամուրան արդարար պէտք է դիմէր դէպի տնտեսական անկումն և հետևեալ թւանշաններից ընթերցողը կարող է համեմատել այդ գիւղի ներկան անցեալի հետ: Այժմ Ջամուրա գիւղում կան մօտաւորապէս 150 կով, 20 մատակ և մէկ ձի, իսկ ոչխար Աստուած տայ *):—Լաւ էր, եթէ այդ աննշան քանակութիւնն ևս հետզհետէ չը նուազէր, որովհետև Ջամուրացին, ստիպված լինելով ամենաատաղ տարիներն անգամ յարդ և խոտ գնել իր անասունները կերակրելու համար, պարտքի մէջ չը խեղդվելու նպատակով, պարտաւոր է սահմանափակել նրանց թիւը:—Չը կայ մէկը այդ գիւղում, որ պարտք չունենայ և ամենից հարուստ այդ գիւղացիներից համարվում է նա, որ միայն 500 ր. պարտք ունի, իսկ պարտք ունենալ մեր գիւղացու համար ընդհանրապէս և Ջամուրացու համար մասնաւորապէս նշանակում է տնով, տեղով, գերդաստանով և անասուններով յաւիտենական գերութեան մատնվել այս ինչ աղայի և կամ հաջի-աղայի ձեռքում, որովհետև գիւղացին իր բոլոր տաժանակիր աշխատանքով հազիւ կարող է իր պարտքի առասպելապէս ահեղ տոկոսներին բաւականութիւն տալ:—Թէև բարեխնամ կառավարութիւնը, տեսնելով Ջամուրայի անտանելի վիճակը անցեալ տարի՝ դէպի նորանվաճ երկիրները գաղթող սահմանակից Չիփալիկ գիւղի 400 դես. հողը միացրեց Ջամուրայինի հետ, բայց դարձեալ իւրաքանչիւր շնչին բաժանվելիք հողաբաժինը չէ հասնում և դարձեալ Ջամուրան զուրկ է արօտատեղիներից և խոտնոցներից: Ջամուրայի վիճակի մէջն են շատ գիւղեր մեր գաւառում:

Մեծ բարերարութիւն արած կը լինի բարեխնամ կառավարութիւնը, եթէ Թոյլատրէ Ջամուրային ևս գաղթել նորանվաճ երկիրները, իսկ նորա ձեռքում գտնված 1143 դ. չափ հողը միացնէ Ախալքալաքի սահմանի հետ, որը նմանապէս շատ անձուկ է: Այդ կարգադրութեան օգուտը կը լինի կրկնակի. նախ՝ որ Ջամուրան կը փրկվի տնտեսական անխուսափելի անկումից և երկրորդ՝ պարապորդ և չքաւոր քաղաքացիներից ամենաքիչը 30 տուն միջոց կունենայ պարապել երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Պէտք է նկատել, որ Ախալքալաքն ևս՝ հացի առևտրի թուլանալով հետզհետէ ընկնում է տնտեսապէս, պարապորդ և չքաւոր քաղաքացիների թիւը շատանում է օրըստօրէ և շատերը գաղթականութեան մէջ են որոնում իրանց փրկութիւնը՝ հետևապէս երկրագործութիւնը քաղաքի ազգաբնակութեան մի մասին կարող է հաց մատակարարել և բաւական մեծ ազդեցութիւն կունենայ մի փոքրիկ քաղաքի տնտեսական դրութեան վրա, որ բաղկանում է 450 տնից:

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 7 Հոկտեմբերի

Կնոջ դերը հասարակութեան մէջ այնքան նշանաւոր և բազմակողմանի է, որ անկարելի է մտածողների ուշադրութիւնը չը գրաւէր:

Բնական գիտութեանց վերջին նոր հետազօտութիւնները, որոնք հիմնված են բազմապատիկ փորձերի վրա, ցոյց են տալիս, որ կինը չը նայելով թէ յայտնի հանգամանքների շնորհիւ քնքշացել է, թողել է մտաւոր կեանքը և առհասարակ ամեն մի ծանր աշխատանքը, սակայն նա այդպէս չէ ստեղծված. արմատացած նախապաշարմունքը և խորին տգիտութիւնն է նրան այդպէս արել: Տըւեցէք նորան հիմնաւոր կրթութիւն, դաստիարակեցէք նորան դէպի բարձր ֆիզիկական, մտաւոր և բարոյական զարգացումը, կերակրեցէք նորան ամենաթարմ գաղափարներով, և ոչ միայն կը տեսնէք, այլ և կը համոզվէք, որ կինը մեր ըսպասածից էլ աւելի է առաջ գնացել՝ նա մինչև անգամ ազատ և վստահ իր ուժերի վրա մրցում է մարդու հետ և շատ բանում նրանից առաջ անցնում: Ասածներս լոկ խօսքեր չեն, այլ հիմնված բազմաթիւ փորձերի վրա: Թողնում եմ այն, որ կինը անարգել մրցելով մարդու հետ կարող է և կարողանում է դառնալ՝ կին-մայր, կին-դաստիարակ, կին-ուսուցիչ, կին-տնտես, կին-հիւանդապահ, կին-բժիշկ, կին-մանկաբարձ, կին-պաշտօնեայ, կին-մատենագիր, կին-պուբլիցիստ և այլն. այդ արդէն մնում է կանանց հարցով պարապողներին, որոնց շատ զբաղեցրել է և դեռ ևս շատ պիտի զբաղեցնի այդ կարևոր հարցը, իսկ ես աչքի առաջ ունեմ մի նշանաւոր հանգամանք, որն առիթ տուեց ինձ ներկայ տողերը գրելու:

Այդ հանգամանքը, որ մենք այնքան անուշադիր ենք թողել և որքան ես գիտեմ դրա մասին ոչ մի խօսք չէ եղել մեր լրագրութեան մէջ, դա այն մշեցի կանանց վիճակն է, որոնք իրանց մարդոց հետ կամ առանձին, թողնելով մայրական գրկից իրանց սիրելի զաւակներին, հայրենիքը, տունը, տեղը, դիմում են Թիֆլիսի ամենակեղտոտ փողոցները, ամենաանբարոյական թաղը, յանձն առնելով կեղտ և անվայել աշխատանքները, մինչև անգամ, համարձակ կարելի է ասել, ամենաանբարոյականացուցիչը: Տեսնում էք մի մշեցի կին ահագին ծանրութեամբ շորեր շալակած մէջքի վրա, անձրևի, ցրտի, ձեան ժամանակ, շատ անգամ էլ քաղցած փորով տնքտնքալով տանում է լուանալու դէպի Գարախանայի կեղտոտ և գարշելի ջուրը. տեսնում էք մշեցի կնոջ, որին մեր Թիֆլիսի փչացած կինտօները քարշ տալով այս կամ այն մեկիտանի խուլ անկիւններից մինում զազանաբար յափշտակում են իրանց անասնական կրքերը. տեսնում էք մշեցի կնոջ, որն աշխատանքի ուրիշ միջոց չը գտնելով՝ պարապում է մուրացկանութեամբ, իսկ մի ուրիշը ծածուկ կամ արդէն յայտնի կերպով ծախում է իր պատիւը: Եւ այդ ամենը ինչու համար: Միայն մի քանի կոպէկ աշխատելու համար: Ես թողնում եմ այն տնտեսական վատ հանգամանքները, որոնք ստիպում են նոցա հեռանալ իրանց սիրած հայրենիքից. ես վերցնում եմ այն վիճակը, որի մէջ գտնվում են ներկայումս: Ներկայ վիճակը, ինչպէս տեսնում էք, մարդասիրական կէտից նայելով, շատ աննախանձելի է: Ճշմարիտ է, նոքա վերադառնում են իրանց հայրենիքը մի քանի կոպէկը ձեռին, սակայն այդ կինը այն մաքուր, պարզ, բարոյական կինը չէ, ինչպէս որ դուրս էր եկել իր հայրենիքից, նա այլ ևս չէ կարողանում մօր ճշմարիտ պարտականութիւնները կատարել. Թիֆլիսի կեղտոտ աշխատանքից յետոյ ընկնում է պրոստիտուցիայի ապականութեան մէջ:

Մենք ուշադրութիւն չը դարձնելով վերոյիշեալ հանգամանքի վրա, այն արած կը լինենք, որ մշեցի կանայքը Թիֆլիսից վերադառնալով իրանց հայրենիքը՝ միանգամից ապականված լինելով, առաջին զարկ կը տան դէմոռալիզացիային (անբարոյականութեան), իսկ այդ բանը մեր բարոյական զարգացման համար ամենակործանարար և վնասակար է: Ուրեմն ինչով առնենք դրա առաջը: Տնտեսական բարւոքումը չը նայելով հիմնաւոր և հաստատ արդիւնքին է դրա առաջն առնելու, սակայն դրան հարկաւոր է մեծ ոյժ, որ չունենք և շատ ժամանակ: Թիֆլիսում գտնվող մշեցի մշակները, ի նկատի ունենալով յիշածներս, դիմեցին Թիւրքաց կօնսուլին, որ արգելի իրանց կանանց գաղթելու, սակայն, ինչպէս լսում եմ, այդ էլ մնացել է առանց հետևանքի: Մինչդեռ մշեցի կանայքը պրոստիտուցիայի շնորհիւ օրըստօր ընկնում են խորին ապականութեան մէջ, ենթարկվելով զանազան սոսկալի ախտերին, մեր արիստոկրատիան, նոյն իսկ մեր ինտելլիգենտները, որոնց թւում և կանանց դասը, անգործ են, մանաւանդ վերջինները, որոնց վրա, իբրև համասեռներ, պարտքի աւելի մեծ

---

*) Աստուած տայ ասը մեր կողմերում գործածական է և նշանակում է բոլորովին չը կայ:

մաս է ընկնում: Թող յարգելի տիկիններն ու օրիորդները փոքր ինչ նեղութիւն կրեն ցած նայելու իրանց երկյարկանի փառաւոր տների պատուհաններից, թող մի րոպէ հեռացնեն իրանց ականջները դաշնամուրի ձայնից և կը տեսնեն, որ իրանց աւելի մօտիկ մշեցի կանանց վիճակը դառն է, ցաւալի է, խղճալի է:

Ի նկատի առնելով այս ցաւալի իրողութիւնները, համարձակվում եմ հրաւիրել մեր «կանանց բարեգործական ընկերութեան» քաղցր ուշադրութիւնը: Իմ համեստ խորհուրդը, որ կը տայի յիշեալ ընկերութեան պատուելի անդամուհիներին, այն է՝ նախ մշեցի կանանց ժողովէր մի որոշ տեղ, հէնց իրանցից տեղեկանար նոցա վիճակի մասին, մանրամասնաբար իմանար նոցա գաղթելու պատճառները և ապա եւ կառաջարկէր համոզէր նոցա վերադառնալ իրանց հայրենիքը, մինչև անգամ շատերին օգնէր դրամական միջոց տալով ճանապարհածախսի և անհրաժեշտ պիտոյքների համար:

Թող մեր փափկասուն կանայքը լաւ իմանան, որ մի մանկական պարտէզ բացանելով դեռ ես քիչ բան են շինում: Եթէ դոքա առաջարկածիս ձեռնամուխ կը լինեն, ես, ի հարկէ, խորհուրդ չէի տայ, որ «Հայոց Բարեգ. ընկերութեան» նըման դանդաղ կատարվէր ամեն մի գործ: Եթէ մեծապատիւ տիկիններն ու օրիորդները կը բարեհաճեն ընդունելու և գործադրելու ասածս՝ ես կասեմ, որ մեր կանայքը ընդունակ են հասարակական գործունէութեան և մի և նոյն ժամանակ հաստատած կը լինեն յօդուածիս սկզբում յայտնած մտքերս: Տեսնենք:

Ե. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 10-ին, կիրակի օր, կատարվեցաւ **ԹԻՖԼԻՍՈՒՄ** վրաց արքայազն իշխանուհի, Մարիամ իսահակեանի թաղումը: Հանգուցեալը թաղվեցաւ հայոց վանքի մայր-եկեղեցու մէջ: Առհասարակ մեզանում չեն թաղում եկեղեցու շինութեան մէջ, այլ միայն եկեղեցու գաւթում, բայց աչքի առաջ ունենալով թագաւորազն իշխանուհու անձնաւորութիւնը, որպէս բացառական մի դէպք՝ վեհափառը թոյլ տուեց նոյն իսկ մայր-եկեղեցում թաղել հանգուցեալին: Թաղումը շատ փառաւոր էր. ամբողջ քաղաքը, կարող ենք ասել, ներկայ էր հանդիսին: Ինքն կովկասեան կառավարչապետ, իշխան Դօնդուկօվ-Կօրսակօվ, համազգեստով և գլխաբաց, հանգուցեալի տանից մինչև Գօլօվինսկի պրօսպէկտը, ոտով ուղեկցում էր հանգուցեալի դագաղին: Թիֆլիսի ամբողջ հայ հոգևորականութիւնը, բոլոր պաշտօնական անձինք, քաղաքային վարչութիւնը, զօրքը, զինուորական երաժշտութիւնը, թէ վրաց և թէ հայոց ամբողջ ինտելիգենցիան, վերջապէս խուռն ամբոխը,—այդ բոլորը կազմում էր մի հանդէս, որ մի մեծ և խոր տպաւորութիւն էր գործում: Բոլոր հանդիսականների վրա լաւ տպաւորութիւն գործեց թէ կուսանաց վանքի զգեստաւորված կոյսերի և թէ երգեցիկ խմբի ներդաշնակ երգեցողութիւնը:

—

«Մշակի» անցեալ համարում պ. Գրիգոր Անիեանցի հաղորդած լուրի մէջ, դերձակների ժողովի մասին, իրան լրատուի ազգանունը սխալ կերպով տպվեցաւ:

—

Ախալքալաքցի Յովհաննէս Տէր-Կիրակոսեան, ինչպէս մեզ հաղորդում են, ի նկատի ունենալով Ախալքալաքի հայոց ուսումնարանների նիւթական աննախանձելի դրութիւնը, այս տարվայ համար ձրիապէս տուեց օրիորդական դպրոցի համար իր տունը, որին վճարում էին տարեկան 200 րուբլ: Նոյնպէս մի քանի ամիս առաջ պ. Սարգիս Վարդանեանց նուիրեց Ախալքալաքի ուսումնարանին Անիի աւերակների Քիւրքճեանի ֆօտօգրաֆիական մի հատ ժողովածու, իր [illegible]:

—

ՍՏԱՎՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են: «Տեղիս գիմնազիայի մէջ ուսանում են 30-ից աւելի հայ աշակերտներ, որոնք հաւաքված են Մօզդօկից, Ղզլարից և Արմաւիրից և այս փոքրիկ խումբը հայ պատանիների գիմնազիայի աշակերտների մէջ բռնում է պատուաւոր տեղ իր առաջադիմութեամբ ուսման մէջ: Բայց այդ երեսուն հոգի աշակերտներից շատ քչերը գիտեն փոքր ի շատէ հայերէն»:

—

«Արձագանք» շաբաթաթերթը լսել է որ պ. Հ. Իփէգճեան մտադիր է շուտով մի դասախօսութիւն կարդալ Թիւրքաց Հայերի ազգային վարչութեան կազմակերպութեան և այդ վարչութեան գործունէութեան մասին: Դասախօսութիւնից ստացած արդիւնքը պարոնը կամենում է նուիրել մեր բարեգործական հաստատութիւններից մէկին:

—

Հետևեալ տեղեկութիւնը քաղում ենք «Արձագանք» շաբաթաթերթից: Հոկտեմբերի 4-ին վախճանվեցաւ Թիֆլիսում Ալէքսանդր Տէր-Շմաւօնեանց, եղբօր-որդին հանգուցեալ Նիկողայոս Տէր-Շմաւօնեանցի, որ անժառանգ մեռնելով, իր ամբողջ կարողութիւնը և նրա հետ մի հոյակապ մատենադարան հայ տպագիր և ձեռագիր գրքերի կտակ թողեց իր եղբօր-որդուն, Ալէքսանդր Տէր-Շմաւօնեանցին: Այժմ, սա մեռնելով, իր կենդանութեան վերջին օրերում, իր ծխատէր քահանայ Մուշեղ Տէր-Ղևոնդեանցի յորդորմամբ, յիշեալ ընտիր մատենադարանը նուիրել է Թիֆլիսի Ս. Գայեանեան հայ օրիորդական միջնակարգ ուսումնարանին: Մատենադարանը բաղկացած է մօտ 500 մեծահատոր և հազուագիւտ գրքերից, 500-ից աւելի, նոյնպէս մեծ մասամբ հազուագիւտ բրօշիւրներից, բազմաթիւ հին և նոր լրագիրներից և ամսագիրներից, քանի մի ընտիր ձեռագիրներից և այլն: Շաբաթաթերթը վերջացնում է իր խօսքը ասելով: «Այսպիսով Ս. Գայեանեան ուսումնարանը ստանում է մի այնպիսի հարուստ մատենադարան, որին նախանձել կարող են մեր ազգային բոլոր դպրոցները»:

—

Ստացանք Թիֆլիսի քաղաքային վարչութեան տպված զեկուցումը ջրանցքի մասին: Կաշխատենք մի այլ անգամ խօսել այդ զեկուցման մասին:

—

Որովհետև տարին վերջանում է «Մեղու Հայաստանի» լրագիրը շարունակում է ամեն ջանք գործ դնել մեզ հետ պօլէմիկ սկսելու, իր բաժանորդների թիւը աւելացնելու դիտմամբ: Եւ ահա նա մեղադրում է մեզ, պատասխանելով մեր ասածին, թէ եկեղեցու դաւաճան է անուանել, թէ «Մշակն» էլ րէկլամներ էր անում: Մենք կասենք կայ րէկլամ և րէկլամ: Տպել մի վէպ, որպէս զի ընթերցողները գրաւվեն, դա ոչ ոքին վնաս չէ, իր գրքերից պրէմիա խոստանալ և կատարել, դա ոչ ոքին չէ վնասում: Բայց ուրիշի մասին դաւաճան ասել, իր բաժանորդների թիւը շատացնելու համար, դա աններելի է, փոխանակ ուրիշներին պրէմիա տալ, ուրիշներից 10 րուբլ առնել, հաւատացնելով որ լրագիրը, ինչպէս անցեալ տարի, նոյնպէս շաբաթը 6 անգամ կը հրատարակվի և հրատարակել լրագիրը միայն 3 անգամ շաբաթը, դա շատ ազնիւ չէ: Ճշմարիտ է մենք էլ անուանեցինք և անուանում ենք «Մեղուին» խաւարասէր, բայց խաւարասէր մի ուղղութեան յայտնի գոյն է, իսկ ուրիշին եկեղեցու դաւաճան ասել, դա մատնութիւն է: Բայց սորանից, նոյն իսկ «Մեղուի» խօսքերով պատասխանելով կասենք «միթէ դրուստ չէ որ խաւարասէր էք»: Դա յատուկ է միմիայն խաւարասէրներին կարծել որ երբ որ մարդը խստութեամբ քննադատում է մի հիմնարկութիւն, նրա վերանորոգութիւնը, կամ բարենորոգումն է ցանկանում, դա նշանակում է այդ հիմնարկութեանը դաւաճան լինել: Նոյն մեղադրանքը բարձում է և Կատկօվ ռուս ազատամիտ մամուլի վրա և այդ պատճառով նա էլ խաւարասէր է:

—

Պ. Պօղոս Սայանեանց խնդրում է մեզ տպել հետևեալը: «Հաւլաբարի Ս. Մարիամեան օրիորդաց դպրոցի տեսուչ պ. Թէմուրազեանց չորս տարի շարունակ գործում էր տոկունութեամբ յօգուտ այդ դպրոցի և դեռ նորերումս յայտնել էր ձեր լրագրի մէջ, որ ինքն դիմելով յայտնի և հասարակութեան դիրք ու կշիռ ունեցող անձանց, ստացել է նրանց պատրաստակամութիւնը դպրոցը պաշտպանելու: Վերջապէս, 10-ին հոկտեմբերի, Էջմիածնեցոց սուրբ Գէորգի եկեղեցում ծանուցմամբ քահանայի և երեցփոխանի հաւաքվել էին նոյն եկեղեցու ծխականներից բազմաթիւ ներկայացուցիչներ: Սուրբ պատարագը աւարտելուց յետոյ, ներկայութեամբ թեմական տեսչի, ժողովականները հաւաքվեցան Մարիամեան դպրոցի դահլիճը: Այս դպրոցը յատկացվեցաւ վերոյիշեալ եկեղեցուն: Ծխականները ընտրեցին իրանց միջից երեք հոգաբարձու՝ պ. պ. Գրիգոր Մկրտումեանցին, Սարգիս Եղիզարեանցին և Արտէմ Տէր-Ղևոնդեանցին: Սրանց հետ ծխականները ընտրեցին և երեք խնամակալներ, այն է պ. պ. Գաբրիէլ Սոնդուկեանցին, Միքայէլ Սալամբէգեանին, և բժիշկ Բագրատ Նաւասարդեանին: Այդ բոլոր պարոնները և նոյնպէս թեմական տեսուչ Բարխուդարեանց և դպրոցի տեսուչ ու երեցփոխան Թէմուրազեանց շատ լաւ խօսեցին: Այսուհետև դըպրոցի գոյութիւնը կարելի է ապահոված համարել: Ժողովուրդը դուրս եկաւ դահլիճից, իր շնորհակալութիւնը յայտնելով հոգաբարձուներին, խնամակալներին, թեմական տեսչին, և դպրոցի տեսչին, որ մի և նոյն ժամանակ և երեցփոխան է Ս. Գէորգ եկեղեցու:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Արևմտեան եւրօպական պետութիւնների քաղաքական կեանքի մէջ երբեմն լինում են օտարոտի, բայց նշանաւոր նմանութիւններ, գրում է „Голосъ“: Հէնց այն ժամանակ, երբ Ֆրանսիական կառավարութեան առաջնորդ Դիւկլերկ և նրան պաշտպանող փարիզի լրագիրները ակնարկութիւններով սպառնում են արձակել պատգամաւորների ժողովը, եթէ նրա մէջ պարլամենտական արձակուրդից յետոյ չի կազմվի կառավարչական մեծամասնութիւն, Լօնդօնի „Times“ լրագիրը հէնց այդպիսի վիճակ է նախագուշակում անգլիական համայնքների ժողովին, եթէ նրա մէջ ընդդիմադրական մեծամասնութիւն կը կազմվի համայնքների ժողովի կանօնադրութեան վերաքննութեան հարցի պատճառով: Թէ Ֆրանսիայի և թէ Անգլիայի մէջ արձակման սպառնալիքները ուղղված են այնպիսի պատգամաւորներին, որոնցից մեծամասնութիւնը գոնէ սկզբունքով համամիտ է կառավարութեան հետ: Ֆրանսիական պատգամաւորների ժողովի մէջ այդ մեծամասնութիւնը կազմված է զանազան գոյների հանրապետականներից, իսկ անգլիական համայնքների ժողովի մէջ ազատամիտներից: Մինչդեռ թէ Դիւկլերկի և թէ Գլադստօնի մինիստրութիւնները նախատեսում են այնպիսի անցքեր, որոնց շնորհիւ նրանց կողմը միայն փոքրամասնութիւն կը լինի:

Պահպանողական կուսակցութեան առաջնորդ Ստաֆֆորդ Նօրսկօտ յայտնեց համայնքների ժողովի մէջ, որ նա մտադիր է ընդդիմադրել պարլամենտական „վիճաբանութիւնների կարգի“ հարցի քննութեան պատճառով: Ինչպէս յայտնի է, Գլադստօն չէ հրաժարվել իր դիտաւորութիւնից վերջ դնել այն կարգերին, որոնք թոյլ են տալիս փոքրամասնութեանը երկարացնել վիճաբանութիւնները: Նա պնդում է, որ պարլամենտը իր կանօնադրութեան մէջ մի յօդուած մտցնի, որը միջոց տայ մեծամասնութեանը վիճաբանութիւնները վերջացած յայտնել, ինչպէս այդ ընդունված է միւս պետութիւնների մէջ: Այդ յօդուածի կառավարչական նախագծի համեմատ վիճաբանութիւնները վերջացած կարող է յայտնել ամեն տեսակ մեծամասնութիւն, քանի ձայներից էլ նա կազմված լինի: Այդպիսի միջոցը չափազանց է թւում մի քանի չափաւոր ազատամիտներին, որոնց կարծիքով այժմեան կանօնադրութիւնը աւելի է ապահովում վիճաբանութիւնների ազատութիւնը: Ազատամիտներից մի քանիսը կամենում են վիճաբանութիւնները վերջացած յայտնելու իրաւունքը տալ միայն այն մեծամասնութեանը, որ կազմված կը լինի ժողովի անդամների երկու երրորդականից: Ուրիշները այդ միջոցն էլ խօսքի ազատութեան համար վնասակար են համարում: Պահպանողականները, որոնք կամենում են փոքրամասնութեան մէջ թողնել կառավարութեանը, յոյս ունեն այդ ազատամիտների վրա, որոնք անբաւական են Գլադստօնի նախագծից“:

Եթէ Ստաֆֆօրդի յոյսերը կարդարանան և նա կը կազմէ ընդդիմադրական մեծամասնութիւն, մինիստրութեան կողմից անմիտ բան կը լինէր հպատակվել ժողովի դատավճռին և հրաժարական տալ: Եգիպտական արշաւանքից յետոյ մինիստրութեան հրաժարականը շատ վատ հետևանքներ կունենար եգիպտական գործերի համար: Այդ անցքը առիթ կը տար Բ. Դրանը կարծելու որ անգլիական պատգամաւորները չեն հաւանում Գլադստօնի եգիպտական քաղաքականութիւնը և դրանից կարող են նշանաւոր դժուարութիւններ ծագել: Գլադստօն ստիպված կը լինի արձակել համայնքների ժողովը և նոր ընտրութիւններ նշանակել, հաւատացած լինելով, որ երկիրը նրան աւելի շատ կողմնակիցներ կը տայ, որոնց մեծամասնութեան օգնութեամբ նա կանցկացնէ իր բոլոր օրինագիծները:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Տրապիզօն, սեպտ. 23

Ներեցէք որ երկու ամիսէ ի վեր նամակ չեմ գրած, փոքրիկ ճանապարհորդութիւն մը ընելուս պատճառաւ: Ես այժմ կը մտածեմ թէ, թէ որ ներկայ լինէի, այս երկու ամսուան մէջ ինչ պիտի գրէի. ոչինչ: Ամառուան շոգէն շատերը ամարանոց էին գնացեր, առուտուրը դադրած և դպրոցները գոցուած էին. կը կարծեմ որ երբ քաղաքի մը ուսումնարանները գոցուած են, լսարանները փակուած են, այստեղ հասարակային կեանքը մասամբ դադրած է: Սեպտեմբերը եկաւ, դպրոցները բացուեցան, հասարակային կեանքը սկսաւ և ահա ես կը սկսեմ իմ նամակները:

Մեր անկոչ հիւրերը, վերայարգելի ճիզվիթները, իրենց ջանքերը կրկնապատկեցին Տրապիզօնի մէջ, որք տարի մը առաջ հաստատված էին տեղս, նոր յայտարարութեամբ մը աշակերտներ ձրի ընդունելէն զատ, դասական պիտոյքները ևս ձրի տալ խոստացան: Հայ ժողովուրդը մեծ խմբով տրամադիր կերևի դիմել նոցա ազգակործան գիրկը և իւր մանուկները յանձնել նոցա կրթութեան, եթէ Համազգային վարժարանը իբրև մի խումբ արգելք չը լինէր այդ հեղեղին:

Ես կը կարծեմ որ եթէ ճիզվիթաց ջանքերը իզուր և ապարդիւն անցնեն Տրապիզօնի մէջ, և եթէ նոցա ոյժերը փշրուին Պոնտոսի ափանցը վրա, Պոնտոսի, որ նոցա ամբողջ Տաճկահայաստանի մէջ գործող ոյժերու կեդրոնն ու կառավարողն է, մեծ հարուած ստացած կը լինին իւրեանց նպատակին հասնելուն մէջ:

Օձը սատակացնելու համար գլխին պէտք է հարուածել, ճիզվիթները իբրև օձ և Տրապիզօնի ճիզվիթաց խումբը իբրև գլուխ՝ զայն պէտք է հարուածել:

Համազգային վարժարանը զայս լաւ ճանչցած լինելով, կաշխատի ամեն տեսակ զոհողութիւններով փրկել հայ մանուկը նոցա ձեռքերէն: Այս նպատակով նա իւր ուսուցչական ոյժը՝ որ արդէն լաւ կազմակերպութիւն մը ունէր, աւելացուց Երկանեան պ. Թադէոսով՝ որ Պօլսոյ դպրոցական նշանաւոր գործիչներէն մին է:

Պատերազմը սկսաւ, արդիւնքի մասին յետոյ կը գրեմ:

Դպրոցական վիճակը ձգենք, առնենք ձեռք տնտեսական դրութիւնը: Մէկ խօսքով բացատրեմ ամբողջ գրելիքիս միտքը: Մէկ պատմութիւն ընեմ ձեզ և դուք ինձ իրաւունք տալով պիտի հանէք վերոյիշեալ եզրակացութիւնը:

Տրապիզօնէն 70—80 վերստ հեռու Բաբերդի հայ գիւղերուն մէջ մեծ քանակութեամբ յարդ կայրեն եղեր, մինչ Տրապիզօնի մէջ մէկ օխայն (3 ֆունտը) 5 կօպէկ է. ինչու համար հայ գիւղացին կոչնչացնէ իւր բերքը. որովհետև հաղորդակցութեան ճամբաները պակաս են: Այսպէս ուրիշ շատ բերքեր կոչնչանան ճանապարհի պատճառաւ:

Երէկ նաւամատոյց իջնելով Պաթումէն եկած

ռուսական նաւը նաւթի մնացուկներ համեղին տեսայ. հետաքրքրուելով իմացայ որ Բագուի նաւթն է. զարմացայ, որ Կասպից ծովի եզերքէն Սև ծովի եզերքը նաւթի նման ծանրաբեռն և աժանագին ապրանք գայ և ձեռնտու կերպով վաճառւի:

Հրաշք մ'էր զոր իմ աչքերը կը տեսնային և այս հրաշքը գործողը երկաթուղին էր: Այս նաւթի գործի մասին վաճառականներէն տեղեկութիւն հաւաքեցի. եթէ իրենք դադրեցուցեր են իրենց յանձնարարութիւնները Ամերիկայէն նաւթի մասին, որ այլ ևս ձեռնտու չէ կարող լինել, նոքա ինձ վստահացրին որ ամբողջ փոքր Ասիայի նաւթը Բագուն պիտի մատակարարէ:

Ահաւասիկ նիւթական չափ մեծ աղբիւր մը զոր երկաթի գծերը պարգևեցին Բագուին:

Քանի որ ահագին փոքր Ասիայի մէջ գրեթէ տեղ մը երկաթուղի չը կայ, Ցաճկաստան միշտ նիւթապէս մեռած է:

Ի վերջոյ յայտնեմ որ Տրապիզոնէն կամ Սեբաստիայէն դէպի Կարին և Վան չինուելիք երկաթուղու գաղափարը կը քննայ:

***

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական առաջադիմական կուսակցութեան պարագլուխ Բիխտէր նորերումս մի ճառ ասեց Բէռլինի ընտրողական ժողովի մէջ: Իր ճառի մէջ Բիխտէր սաստիկ յարձակուեց պալատական քարոզիչ Շտէօկէրի դէմ, որ շարունակում է քարոզել հալածանք հրէաների դէմ: Ճառախօսը այն կարծիքի է որ Շտէօկէրի յարուցած հալածանքները ներգործութիւն ունեցան Ունգարիայում նորերումս պատահած հակահրէական անկարգութիւնների վրա: Եթէ Գերմանիայում ամբոխը չը հալածեց հրէաներին, այդ ցոյց է տալիս, աւելացրեց ճառախօսը, որքան առողջամիտ է գերմանական ամբոխը: Բայց Ունգարիայում ոչ մի մինիստր երբէք ներկայ չէ գտնուել հակահրէական ժողովներին, այն ինչ Գերմանիայում այդ պատահել է: Այդ խօսքերով Բիխտէր ակնարկեց պրուսական մինիստր Պուտկամէրի վրա, որ նորերումս ներկայ է գտնուել հակահրէական ընտրողական ժողովին, որտեղ ճառախօսում էր Շտէօկէր իր սիրած թէմայի վրա, այն է հրէաներին հալածելու անհրաժեշտութեան վրա:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

ԼՕՆԴՕՆ, 8 Հոկտեմբերի: Եգիպտոսից վերադարձող զօրքերին դիմաւորելու համար ահագին պատրաստութիւն են տեսնում:

Կ. ՊՕԼԻՍ, 8 Հոկտեմբերի: Այստեղի անգլիական դեսպանին ուղարկած յայտագրով Բ. Դուռը առաջարկում է Անգլիային մաքրել Եգիպտոսը և վերականգնել այնտեղ այնպիսի կարգեր, որոնք ապահովում են սուլթանի բարձր իրաւունքները:

ԿԱՏԱՐՐՕ, 8 Հոկտեմբերի: Հերցեգովինայի մէջ ապստամբների նոր խումբեր յայտնվեցան, որոնք յարձակվում են աւստրիական զօրքերի վրա:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 Հոկտեմբերի: Հոկտեմբերի 6-ին ճանապարհորդ Միկլուխօ-Մակլայ ներկայացաւ Թագաւորին:

ՊՍԿՕՎ, 8 Հոկտեմբերի: Վարշավայի երկաթուղու ուղղութեամբ Պսկօվի և Պլիւսայի մէջ անտառներ են այրվում:

ՍԱՄԱՐԱ, 8 Հոկտեմբերի: Ցուրտ է: Հացի առևտուրը հանդարտ է:

ՍԿՕՊԻՆ, 8 Հոկտեմբերի: Ռիկովի կայքը կալանաւորված է: Հոկտեմբերի 19-ին նշանակված է նահանգական դատարանի մէջ Սկօպինի բանկը սնանկ յայտնվելու գործը:

ԿԱԶԱՆ, 8 Հոկտեմբերի: Երէկ ուղևորվեցան դէպի Նիժնի եօթ շոգենաւեր: Ցուրտ եղանակ է սկսվում:

ՈՒՖԱ, 8 Հոկտեմբերի: Ինժեներների երկու խումբեր երկաթուղիական խուզարկութիւններ են անում դէպի Սամարա և Զլատուստ:

ՏՕՄՍԿ, 8 Հոկտեմբերի: Այստեղ ցուրտ է և ձիւն եկաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 Հոկտեմբերի: „Правит. Вѣст.“ լրագիրը հաղորդում է, որ սեպտեմբերի 27-ին Մելիտոպոլի և Բերդեանսկի մէջ Տաւրիկական նահանգում փոստի վրա յարձակումն գործվեցաւ: Փոստատարը սպանված է: Յափշտակված է 501,941 ր.: Կառապանը ազատվեցաւ: Հոկտեմբերի 2-ին Աստրախանկա գիւղի մէջ բռնված են մի գիւղացի, պահեստի զինուոր և մի թիւրքիահպատակ: Առաջին երկուսը խոստովանեցին: Մասամբ նրանց ցուցմունքների համեմատ գտնված է 326,920 ր.: Յանցանքը ըստ երևոյթին ընդհանուր քրէական բնաւորութիւն ունի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ նուիրատւութիւնները յօգուտ կանանց բժշկական կուրսերի աջող են գնում: Պատերազմական մինիստրութիւնից հաստատված ուսուցիչների մասնաժողովի մէջ ի միջի այլոց 25,000 ր. գումար միաժամանակ է ստացված, Մոսկվայի մի ընկերութեան ներկայացուցչուհին յայտնել է իւրաքանչիւր տարի 5,000 ր. ներկայացնել, Մոսկվայի առևտրականները խոստացել են 200,000 ռուբլ ներկայացնել, եթէ կուրսերի կազմակերպութիւնը յանձն կառնի Ս. Պետերբուրգի դուման: Կանանց կուրսերի վիճակը ապահոված կարելի է համարել: Միացեալ նահանգների մէջ ցորենի հունձը 525 միլիոն բուշել է համարվում, դուրս տանելու համար մնում է 225 միլիոն: Սիմինդրը 800 միլիոն բուշել է: Նոյեմբերի 22-ին կը սկսվի Ս. Պետերբուրգի փոխատու ընկերութեան նախկին անդամների դատաստանական գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են կեղծելու և ուրիշ յանցանքների մէջ: Գործը մի քանի շաբաթ կը շարունակվի: Մեղադրվածները 12 հոգի են: „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ նաւագնացութեան օգտի համար ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը մտադիր է եկող տարի ուղղել Դնէպր գետի մի մասը, այդ աշխատանքները կատարել նոյնպէս և Պրիպետի վրա, ամրացնել Վիսլա գետի ափերը Գնէվօշէվսկօլենիցի տափարակի Մացեվից գիւղի մօտ, ամբարտակներ կառուցանել Ռիբինսկի և Կազանի մէջ:

ՄՕՍԿՎԱ, 8 Հոկտեմբերի: Լուր է տարածված, որ աշխարհահանդէսի շինութիւնները կը մնան մինչև Թագադրութիւնը, ժողովրդական զբօսանքների համար:

ՍԿՕՊԻՆ, 9 Հոկտեմբերի: Ռիկովին առաջին հարցման ժամանակ յայտնվեց նոր կեղծում. 1882 թուին 2,430,000 ր. պարտամուրհակներ էին բողոքված, մինչդեռ հաշւի մէջ ցոյց էր տուած 670,000 ռուբլ:

ՓԱՐԻԶ, 9 Հոկտեմբերի: Հանրապետութեան նախագահ Գրևիի հրաւէրով Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ երկուշաբթի ներկայ կը գտնվի մեծ որսին Ռամբուլէի մէջ: Սօցիալական անկարգութիւնները Մոնսօ-Լեմինէի մէջ Մակօնի մօտ դադարեցրած են զօրքերով: Նրանց վերաբերում են ինտերնացիօնալի ազդեցութեանը: Կալանաւորութիւնները շարունակվում են:

ԼՕՆԴՕՆ, 9 Հոկտեմբերի: Այսօր առաւօտ հանդիսաւոր կերպով մուտք գործեց Եգիպտոսից վերադարձած գվարդիական զօրքերի մի մասը: Ժողովուրդը ընդունեց զօրքերին ոգևորված աղաղակներով:

ԲԵՐԼԻՆ, 9 Հոկտեմբերի: Այստեղ և ուրիշ մեծ քաղաքների մէջ ընտրութիւնների ժամանակ յաղթեցին առաջադէմները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Հոկտեմբերի: Բորսայի վրա ֆոնդերը ընկնում են. արևելեան և ներքին փոխառութիւնների տոմսակները ½% և քաղաքայինը 1%: Հացի առևտուրը կատարելապէս հանդարտ է: „Голосъ“ լրագրի հաղորդած լուրը, թէ հացի գրաւականով պարտքեր տուող բանկերը նեղված են, չէ վերաբերում մայրաքաղաքների բանկերին և նրանց բաժիններին, որոնք այդպիսի պարտքերը ամենևին չեն տալիս: Ճանապարհորդ Միկլուխօ-Մակլայ հոկտեմբերի 13-ին նորից ուղևորվում է Աւստրալիա, Սիդնէյ իր հիմնած բիօլօգիական կայարանը:

ՄՐԵՏԵՆՍԿ, 9 Հոկտեմբերի: 1882 թուականին 240 պուդ ոսկի է հանված: Եկատերինբուրգի, Մօրշանսկի, Վօլօգդայի և Եարօսլավլի մէջ տաք եղանակ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Հոկտեմբերի: Քաղաքի մէջ դարձեալ կայ թանձր մառախուղ, ծուխ և այրվելու հոտ, որ հասնում է մինչև Կրօնշտադտ: Այրվում են անտառներ ոչ թէ միայն Պավլովսկի, Կոլպինի և Վարշավայի երկաթուղու մօտ, այլ և Լեախտայի և Նօվայա գիւղի մէջ: „Новое Время“ լրագիրը, քննելով անտառային հրդեհների կորստաբեր փաստերը, մեկնում է այդ մասամբ տեղական իշխանութիւնների վատ կարգադրութիւններով և մասամբ նրանով, որ հրդեհը հանգցնելու համար կանչված գիւղացիներին վարձատրութիւն չէ տրվում, ուստի նրանք ակամայ են գործում: „Биржевыя Вѣдомости“ լրագիրը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրութիւնը անհրաժեշտ համարեց սնանկ բանկերի և ընկերութիւնների գործերը վերջնականապէս կարգադրելու համար մասնաժողով հիմնել, որի անդամները կը լինեն ֆինանսների և արդարութեան մինիստրութիւններից, ակցիօներներից և պարտատէրերից:

ԲՐԵՍՏ-ԼԻՏՕՎՍԿ, 9 Հոկտեմբերի: Կուտնօի մօտ տեղի ունեցած երկաթուղու գնացքի ջարդվելը մի չարագործի գործ է, որ ծանօթ է երկաթուղիական կարգերի հետ: Դատաստանական քննութիւնը շարունակվում է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 Հոկտեմբերի: Ուչօտնի բանկը յայտնեց, որ հոկտեմբերի 12-ին կը սկսվի 445,211 ռուբլ գումարի 3% ստորագրութիւն Անդրկովկասեան երկաթուղիների ապահոված օբլիգացիաների: Սկզբնական գինը 126 ր. մետալ, իսկ ստորագրականը 110 ր.: Տօնվեցաւ մանկավարժ-գրող Չիստեակովի 50 ամեայ յոբելեանը: Հոկտեմբերի 10-ին հանդիսաւոր կերպով ծով կիջեցնեն „Վլադիմիր Մոնոմախ“ շոգենաւը:

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, 10 Հոկտեմբերի: Հոկտեմբերի 8-ին ուղարկվեցաւ Սիբիր դաշտային նախկին ինտենդանտ Մակշէեվ: Կոստրոմայի, Կինեշմայի, Սամարայի, Նիժնի-Նովգորոդի, Պերմի, Զլատոուստի և Շադրինսկի մէջ տաք եղանակ է: Կազանի, Ցարիցինի և Սեմիպալատինսկի մէջ ցուրտ է:

ԱԼԱՏԻՐ, 10 Հոկտեմբերի: Շատ բեռներ չը հասան: Վնասները մեծ են:

ԽԱՐԿՕՎ, 10 Հոկտեմբերի: Նահանգի մէջ հունձը վատ է:

ՓԱՐԻԶ, 10 Հոկտեմբերի: Բժիշկները յայտնեցին, որ Տուրգենևն առողջանում է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 Հոկտեմբերի: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, թէ ենթադրված է վճռել, որ երկաթուղիական ընկերութիւնների վարչութեան կառավարչական անդամի պաշտօնը չէ կարելի միացնել պետական մի այլ պաշտօնի հետ: Վարչութեան անդամները պարտաւոր են հսկել, որ երկաթուղիական ընկերութիւնների կարգադրութիւնները լինեն օրինական և չը վնասեն պետական շահերին և այդ պատճառով նրանց իրաւունք է տրվում հրաւիրել վարչութիւնը և բողոքել ընկերութիւնների վճիռների դէմ: Գիւղական կալուածական բանկերի համար արդէն կազմված է պաշտօնների ցուցակը և բանկի խորհրդի մէջ ծառայողների ռոճիկները որոշված են: Կառավարչին նշանակված է 5,000 ր., խորհրդի անդամին 3,000 ր., գլխաւոր գործավարին 1,800 ր., նրա օգնականին 1,000 ր., գլխաւոր հաշուապահին 1,800 ր., նրա օգնականին 1,200 ր., կասսիրին 1,200 ր., և կանցելարիական ծախսերի համար 7,000 ր.: Բաժինների մէջ նախագահին 2,000 ր., անդամներին 750 ր., հաշուապահին 1,000 ր. և կանցելարիական ծախսերի համար 4,200 ր.: Բանկերի կառավարիչների, խորհրդի անդամների և գործավարների պաշտօնը կարելի է միացնել միւս պաշտօնների հետ ֆինանսական բաժնի վերաբերեալ այն դէպքում, երբ գիւղական բանկերի բաժինները կից են պետական բանկերի գրասենեակներին և բաժիններին, միայն լրացուցիչ ռոճիկը և ծախսերը կանվեն պարզ առնողներից վերցնվող 1% տուրքից: Լուր է տարածված, որ Լօզօվօ-Սեվաստոպոլի երկաթուղին պետական վարչութեան ենթարկելու գործը դադարեցրած է: „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ հաստատման համար առաջադրված է մի նախագիծ, որի համեմատ ամբողջ կայսրութեան մէջ պէտք է տուրք առնվի մասնաւոր անձանց ձիաներից և կառքերից յօգուտ քաղաքային եկամուտների: Երէկ բացվեցաւ ռուսաց երկաթուղիների ներկայացուցիչների ժողովը, որ սկսեց կէտ առ կէտ քննել Բարանովի մասնաժողովի նախագիծը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 Հոկտեմբերի: Անհիմն է լրագրական այն լուրը, իբր թէ Մոսկվայի ընկերութեան ներկայացուցչուհին նուիրեց 500,000 ր. յօգուտ կանանց բժշկական կուրսերի: Թագաւոր կայսրը ընդունեց Միկլուխօ-Մակլային: Մելիտոպոլի մօտ կողոպտած փոստի գումարներից գտնված է 326,920 ռուբլ: Յանցանքը ընդհանուր քրէական բնաւորութիւն ունի: Ներկայացնվող նուիրատւութիւնների հիման վրա կանանց կուրսերը դրամական կողմից ապահոված կարելի է համարել: „Новости“ լրագիրը հաղորդում է, իբր թէ պետական խորհրդի մէջ վճռված է վերադարձնել իրանց տէրերին և նրանց ժառանգներին այն կայքերը, որոնք կալանաւորված են արևմտեան երկրում (Լեհաստանում):

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Հոկտեմբերի: Միկլուխօ-Մակլայ վերջացրեց իր հաղորդութիւնները և հոկտեմբերի 13-ին նորից ուղևորվում է Աւստրալիա: Կանանց բժշկական կուրսերի մասնաժողովը, մի շարք նուիրատւութիւններ ընդունելով, միջնորդում է պատերազմական մինիստրութեան առաջ հաստատել կուրսերի գումարի կազմելը և նուիրատւութեան շարունակելը:

ԲԵՐԼԻՆ, 9 Հոկտեմբերի: Մենդելսօն և Վարշաուէր դրասենեակների մէջ ստորագրութիւն է բացվում Անդրկովկասեան երկաթուղիների օբլիգացիաների համար: Շատ ցանկացողներ կան նշանաւոր գումարներ գրվել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 Հոկտեմբերի: „Голосъ„ լրագիրը հաղորդում է. ներքին գործերի մինիստրութեան մէջ մշակված է նախագիծ, մասնաւոր անձանց ձիաներից և կառքերից յօգուտ քաղաքների տուրքեր հաւաքելու մասին ամբողջ պետութեան մէջ: Երէկ բացվեցաւ երկաթուղիական ընկերութիւնների ներկայացուցիչների ժողովը, որ կը քննէ Բօրանովի մասնաժողովից կազմած երկաթուղիական օրէնսդրութիւնը:

ՓԱՐԻԶ, 10 հոկտեմբերի: Պատգամաւորների ժողովի և սենատի նիստերը կը սկսվեն նոյեմբերի 9-ին:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոկտեմբերի 1-ից **ՔՐԷՀՈՎ** է տրվում **ԽԱՆՈՒԹ** երկու մուտքերով, երկու **ՍԵՆԵԱԿՆԵՐՈՎ** վերին յարկում և մառանով ա. խարլօվի, Հաւլաբարի կամուրջի մօտ **ՇԱԴԻՆՈՎԻ** քարվանսարայի հանդէպ: Ցանկացողները կարող են դիմել Ելիզավետինսկայա փողոց Վարվարա խարլօվի տունը, № 71:

1—3

Համաձայն § 26 պանդոկների կանոնադրութեան, պանդոկների, ուտեստների խանութների և իջևանների ընկերութեան պատգամաւորները, պարտաւոր են նոյեմբերի 1-ից ոչ ուշ, ձեռնարկել միջին ակցիզի բաժանմանը եկող 1883 թւի համար, որի համար Թիֆլիսի ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ խնդրում է վերոյիշեալ հիմնարկութիւնների տէրերին, ներկայ թւի նոյեմբերի 1-ից ոչ ուշ ստանալ վարչութենից վկայականներ յիշեալ հիմնարկութիւնները բացանելու 1883 թւի համար: Հակառակ դէպքում նրանց հետ վարչութիւնը կը վարվի պանդոկային կանոնագրութեան §§ 18 և 35 համաձայն:

1—3

Ներսիսեան դպր. աւարտած և ուսուցչութեամբ պարապած մի երիտասարդ կամենում է, ձեռնտու պայմաններով, ուսուցչի պաշտօն ունենալ կամ քաղաքում կամ թէ գիւղում:

Պայմանները կարելի է իմանալ Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, „Վարշաւսկայա ապտեկայ„ կոչուած խանութում պ. Մարտիրոս Հախնազարեանից:

3—5

КЁЛЕРСКАЯ
УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.

15—50

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
սիստեմատիքական ընթացք
Գրիգորի Վարձելեան
Հայոց միջնակարգ ուսումնարանների համար
Մասն առաջին (ամբողջ թուեր)

Մամուլի տակն է և սեպտեմբերի առաջին օրերին լոյս կը տեսնի նոյն խնդիրների երկրորդ մասը (կոտորակ թուեր և երրորդական կանոններ):

Գինն է 40 կոպ.

Ուսումնարաններին զիջումն 20%: Ծախվում է Վ. Շահվերդեանի լրագրական գործակալութեան խանութում.

Օտար տեղերից դիմում են այս հասցէով Тифлисъ, въ Агентство В. Шавердова:

Տրվում է վարձով Սալի մեծ փողոցի վերայ Ալէքսանդր Թաճիրեանցի նոր շինած տներում, վերին յարկում, ԵՐԵՔ ԵՒ ՉՈՐՍ ՍԵՆԵԱԿՆԵՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԼՈՒՍԱՒՈՐ ԵՒ ԳԵՂԵՑԻԿ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ իրանց խոհանոցներով ԵՒ ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ, նոյնպէս առանձին մէկ մէկ սենեակով. ներքին յարկում խանութներ արժան գներով, պահեստներ (подвали) 20—30 սաժէն երկարութեան և 10 արշին լայնութեան իր ջրհորներով, ՍԱՌՑԱՏԵՂԵՐՈՎ. շատ յարմար է գինու, հացի, երկաթի և այլ մթերքների համար վարձել, մանաւանդ սպիրտի զաւոդի և սլեսարնի վերաբերեալ գործարանի համար: Նոյնպէս տվում է հայոց փողոցին կից Պրիկազնի ուլիցում № 10 տան ներքին յարկը եօթն օթախից բաղկացած լուսաւոր և գեղեցիկ բնակարան իր կուխնայով, ներքնատնով, առանձին պարադնի մուտքով: Նոյն տեղում № 7 տան վերին յարկը չորս օթախից բաղկացած բնակարան իրա կուխնով, ներքնատնով և ամեն յարմարութիւնով: Գների համար խօսել կամեցողը կարող է իմանալ իրանից՝ ԹԱՃԻՐԵԱՆՑԻՑ ԿԱՄ ՆՐԱ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆՑԻՑ.

2—3

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է ունենալ որ և է պաշտօն ՄԱԳԱԶԻՆՆԵՐՈՒՄ կամ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐՈՒՄ Թիֆլիսի մի յայանի անձնաւորութեան երաշխաւորութեամբ:

Հասցէն կարելի է իմանալ „Մշակի„ խմբագրատանը:

3—5

ԹԷՅ առաջին հունձի այս տարի չափազանց զօրաւոր և հոտաւէտ: Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՌԻ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ Փու-չու-Փու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շօկօլադ ֆրայ, Շեֆիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՌԵՎՕԼՎԵՐՆԵՐ Վէբլի, ԹԱՄԲԵՐ Բալիներիի, կօլմանի նըշըլշայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շվարցի կէս գնով: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ** № 156, 157, 158, 159 և 100:

55—100

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
БРОШЮРА
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ
ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ
L'ORIENTAL
ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 րուբլ է, կէս տարվանը 4 րուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևեալ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Միջին փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Միքայէլ Տէր-Նիկողոսեանի պահեստ.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, Փրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սունդուկներ ճանապարհի 6—35 ր., մառաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը, կուխնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվօլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլլաններ) բէվօլվէրի, սիգար Ռէնգարդի Փաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրօցի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՂ. ԳԱՊՕՎՆԵՐԻ, բէսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) Էյնէմի. կօֆէ Էյնէմի և Միխէլսօնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. Հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղույթուկ (пухъ), պադնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ պանապան Փաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հաւը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պիրօրմիս կտրելու մաշինայ. Անգլիական ութիւներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտր—ջուր մաքրելու, կրախմալ կարօրկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարտափրաւակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիէներ, զգալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չումիչկէք 45 կ.—5 ր., շամդաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոչկաններ Վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շալիկներ, մարդկերանց գալստուկներ, գոտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շըքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչավի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մառոկի կօճի և շալէ (гарусъ) ֆէլչանկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մնր գօլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կօրր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ պէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջին փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

153—180

Միքայէլ Տէր-Նիկողոսեանի պահեստ.

Միջին փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

ՐԱՖՖԻ
ԽԱՄՍԱՅԻ
ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Գիրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է՝

„Մշակի“ խմբագրատանը.—„Կենտրօնական գրավաճառանոցում“ Միրիմանովի տանը № № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցում“.—Պ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում.—Պ. Շահինեանցի ծխախոտի խանութում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով:

ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.
РАФФИ.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ. ԹԷՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ
(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ր. 10 կ. թէյի հետ ամեն տեղ	1 ր. 30 կ.
1 „ 20 „	1 „ 60 „
1 „ 40 „	1 „ 90 „
1 „ 60 „	2 „ 20 „
1 „ 80 „	2 „ 50 „
ամենալաւը 2 ր.	3 „ ——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկօլադի և կակաօ-ֆրայ էսսենցիայի, Պալմերի բիսկվիտների, Բայլի կոնֆեկտների, Շեֆիլդի դանակների, Ցուրնեռի գրիչների, Դաուի հրացանների, Վէբլիի րէվօլվերների, Բարնաբիի թամբերի, Մեկկնի ամանների, կօլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի ալբոմներ և այլն և այլն:

8—100

Дозволено цензурою, Тифлисъ, 11 Октября 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. зак. д.